

## Տ. ԿՅՈՒՐԵՂ ԱԲԵՂԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
(ավազանի անունը՝ Աշոտ)

Ծնվել է 1978 թ. օգոստոսի 7-ին Էջմիածին քաղաքում:

1985-1993 թթ. սովորել է տեղի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1993-1997 թթ. ուսանել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանում:

1997-2003 թթ. ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2002 թ. դեկտեմբերի 24-ին՝ Ս. Ստեփաննոս նախավկայի տոնին, ձեռամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2003 թ. Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ աշխատամքի է անցել ՔԴԿ-ում, ապա Կաթողիկոսարանում՝ որպես գործավար-քարտուղար:

2003 թ. հոկտեմբերի 30-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Թվականության համակարգերը հայ մատենագրության մեջ» թեմայով:

2003 թ. նոյեմբերի 23-ին, ձեռամբ Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: